**ՆԱԽԱԳԻԾ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«____» _____ 2022 թվական N _____-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 86 ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 22-Ի N 238 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՑՎԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 44-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է***.

1. Վերացված ճանաչել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի մայիսի 16-ի «Ավելացված արժեքի հարկից ազատվող գյուղատնտեսական մթերքների վերամշակման ավարտուն տեխնոլոգիական ցիկլ անցնող ապրանքների ցանկը հաստատելու մասին» N 86 որոշումը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 22-ի «Ավելացված արժեքի հարկից ազատվող զինվորական հանդերձանքի ցանկը հաստատելու մասին» N 238 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է սույն որոշման 1-ին կետի՝

1) 1-ին ենթակետի մասով՝ 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա.

2) 2-րդ ենթակետի մասով՝ 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, իսկ մինչև 2019 թվականի հունվարի 1-ը «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 28-րդ կետով

նախատեսված ավելացված արժեքի հարկի արտոնությունից օգտվող և պայմանագրեր կնքած հարկ վճարողների համար՝ պայմանագրերի գործողության ժամկետի ավարտից հետո ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**